ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, www.odzun.am, Էլ. փոստ odzun.lori@mta.gov.am, odzun@bk.ru

թիվ 384-15
30 դեկտեմբերի, 2015թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 30-ի N 53-ից N 56 որոշումները:

Առդիր՝ հինգ թերթ:

Օձուն համայնքի *ղեկավար* *Ա. Տիտանյան*

Կատարող՝ Վ. Տիտանյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 դեկտեմբերի 2015 թվական, N 53-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ, 12[1] և 14-րդ հոդվածների՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 30-ի տասնվեցերորդ հերթական նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0460-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., դեկտեմբերի 30, ժ. 11:00
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 դեկտեմբերի 2015 թվական, N 54-Ն

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ կետի, 54-րդ հոդվածի, ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ,, N 71-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., դեկտեմբերի 30
Գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 30-ի N 54-Ն որոշման

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի մասին» N 71-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

01.1.1. գործառնական դասակարգման նախահաշվում՝

1. 4234 հոդվածի ծախսը պակասեցնել 18800 հազար ՀՀ դրամով.
2. 4241 հոդվածի ծախսը պակասեցնել 23800 հազար ՀՀ դրամով.
3. 4261 հոդվածի ծախսը պակասեցնել 35200 հազար ՀՀ դրամով.
4. 4264 հոդվածի ծախսը պակասեցնել 42000 հազար ՀՀ դրամով.
5. 4111 հոդվածի ծախսն ավելացնել 119800 հազար ՀՀ դրամով:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 դեկտեմբերի 2015 թվական, N 55-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0460-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի „Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին„ N 1918-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող, գ. Օձուն, փողոց 5, թիվ 69/1 հասցեում գտնվող, 06-112-0460-0031 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.02 հեկտար մակերեսով հողամասը, բենզալցակայան կառուցելու նպատակով, բնակավայրերեի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., դեկտեմբերի 30
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 դեկտեմբերի 2015 թվական, N 56-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հիմք ընդունելով Օձուն համայնքի բնակիչների դիմումները և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը, Օձուն համայնքի մի շարք բնակիչների նկատմամբ սահմանել գույքահարկի գծով արտոնություններ հետևյալ չափերով.

1) Արթուր Սուրենի Դավթյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 6, տուն 13/1, ՀՎՀՀ 13778671) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենայի 2015 թվականի գույքահարկի ապառքից՝ 6 400 (վեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և 2015 թվականի գույքահարկի տույժից՝ 211 (երկու հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ գումարի չափով.

2) Մեխակ Սերյոժայի Ղարիբյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 17, տուն 48, ՀՎՀՀ 13611114) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենայի 2015 թվականի գույքահարկի ապառքից՝ 8 000 (ութ հազար) ՀՀ դրամ գումարի չափով և 2015 թվականի գույքահարկի տույժից՝ 264 (երկու հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով.

3) Գագիկ Սամվելի Մնացականյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 8, շենք 9, բն. 11, ՀՎՀՀ S0250233) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենայի 2014 թվականի գույքահարկի ապառքից՝ 6 583 (վեց հազար հինգ հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով և 2012-2015 թվականների գույքահարկի տույժերից՝ 8 279 (ութ հազար երկու հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., դեկտեմբերի 30
Գ. Օձուն